

— Անիծեա՛լ այն խարդախ ձեռքը, որ այս նամակը գրեր է: Այս գիրը իմն չէ՛, այս ստորագրութիւնը իմն չէ՛, այս կնիքը իմն չէ: Մեջի իմաստը իմն չէ, վասնզի մինչեւ Ռշտունեաց Ոստանը ոչ ձիւն, ոչ ցուրտ, ոչ բուք, ոչ թշնամեաց բազմութիւն զիս չարգիլեցին իմ Յեղիսէի հասնելու ճանապարհս ընդհատելու: Ութ տարի քրտինք, արիւն թափեցի, ամէն տեսակ արշաւանք յանձն առի, անկարելի կարծուածը կարելի ըրի, որ իմ եւ քու հայրենի ժառանգութեան փոխարէն մը ստեղծեմ, փոքր գեղեցիկ գաւառ մը խնդրեցի, վասնզի լիճ մը ունէր, վասնզի գետակ մը ունէր, որպէսզի իմ Յեղիսէս հայրենի երկրին նմանութեամբ գոնէ օտարութեան մէջ միխթարուի, եւ երբ նպատակիս հասած կը կարծէի ինքզինքս եւ երջանիկ՝ Ոստանը գլխուս վրայ եթէ կործանէր ոչինչ էր:

— Այդ նամակը քու գիրդ չէ՞:

— Իրաւ ջանացեր է գիրը նմանեցնելու, կնիքը ջանացեր են նմանեցնել, բայց տե՛ս, բաղդատե՛ սա երկու կնիքները:

Եւ ծոցեն կսքեալ թուղթ մը հանելով ցոյց կ'ուտար Յեղիսէին, որ բաղդատէ: Իսկ նա, երբ սուր աչք մը նետելով որոշ տեսաւ խարդախութիւնը, փոխուեցաւ բոլորովին, եւ այդ կորովի կինը ձեռքը աչքերուն դրաւ եւ լռիկ յորդահոս արտասուքներ սկսաւ թափել:

— Չրուցե՛, Յեղիսէ՛, ո՞վ կը կարծես այդ դաւաճանը՝ գոնէ ես զանի պատմելով միխթարվիմ:

— Ի՛նչ օգուտ դաւաճանը պատժելէն, միթէ՛ եղածը չեղած կրնա՞յ լինիլ.— այս յուսահատ խօսքը զրուցելով խեղճ կինը նստաւ բազմոցին վրայ, վասնզի է՛լ ծունկները զինք չէին կրնար վերցնել: Իսկ Գուրգէն նորա ոտքերուն քով նստած գետինը կը մտածէր. երկայն լռութիւն մը տիրեց:

— Այդ արցունքը կը վկայէն, որ դու զիս կը սիրես, Յեղիսէ. աստուած արդար է, վերջապէս իր արդարութիւնն կը հասնի այդ անզգամները պատմելու համար. ես դարձեալ քեզ խօսք կ'ուտամ հաւատարիմ